

«ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ»։ ԾԻՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐԻՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍ
"TSARAV AGHBYUR": FROM A RITUAL SPRING TO AN URBAN NEIGHBORHOOD
«ЦАРАВ АХБЮР»: ОТ КУЛЬТОВОГО РОДНИКА К ГОРОДСКОМУ РАЙОНУ

Հասմիկ Գալստյան
Hasmik Galstyan
Асмик Галстян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

hasmik.galstyan@iae.am

Ներկայացվել է՝ 01.11.2025; գրախոսվել է՝ 19.11.2025; ընդունվել է՝ 10.12.2025
Received: 01.11.2024; Revised: 19.11.2025; Accepted: 10.12.2025
Представлено: 01.11.2024; рецензировано: 19.11.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence–ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-272

Ամփոփում – Սույն հետազոտությունն ուղղված է Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքում գտնվող Ծարավ աղբյուրի պատմական, մշակութային և սոցիալ-տնտեսական նշանակության բացահայտմանը: Աղբյուրն առանձնանում է ոչ միայն իր ջրի որակով, այլև դարերով ձևավորված ժողովրդական հավատալիքներով, ծիսական կիրառություններով և համայնքային հիշողության մեջ պահպանված կարևորությամբ: Հիմնվելով դաշտային ուսումնասիրության, արխիվային փաստաթղթերի, պատմական վկայությունների և Խաչատուր Աբովյանի գրական ստեղծագործությունների վրա՝ ներկայացվում է աղբյուրի ընկալման փոփոխությունը վերջին հարյուրամյակում: Հատուկ ուշադրություն է դարձվում աղբյուրի ընկալման տարբերությանը ավանդական բնակչության և նորաբնակների միջև՝ ցույց տալով, թե ինչպես է մշակութային ժառանգությունը պահպանվում կամ մոռացության տրվում համայնքային ինքնության վերափոխման պայմաններում: Աշխատանքը նաև ընդգծում է Ծարավ աղբյուրի քաղաքաշինական ազդեցությունը և դրա անվան տարածումը՝ որպես տարածքային հիշողության կրողի: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և բացահայտել Ծարավ աղբյուրի պատմական, մշակութային ու ծիսական նշանակությունը բնակչության շրջանում՝ սկսած XIX դարից մինչև մեր օրերը: Այդ նպատակով կիրառվել են մի շարք հետազոտական մեթոդներ, որոնք ներառում են ինչպես որակական, այնպես էլ պատմական մեթոդաբանական մոտեցումներ: Հիմնական աղբյուրներից առաջնայինը մեր իրականացրած դաշտային աշխատանքն է Քանաքեռ և Ավան վարչական շրջաններում՝ ուղղված տեղաբնակների հիշողությունների, պատկերացումների և աղբյուրի նկատմամբ ունեցած վերաբերմունքի ուսումնասիրությանը:

Abstract – This research focuses on uncovering the historical, cultural, and socio-economic significance of Tsarav Aghbyur, a spring located in the Kanaker-Zeytun administrative district of Yerevan. The spring is notable not only for the quality of its water but also for the centuries-old popular beliefs, ritual uses, and its preserved importance in communal memory. Drawing on field research, archival documents, historical accounts, and literary references by Khachatur Abovian, the study presents how perceptions of the spring have changed over the past century. Special attention is given to the differing perceptions of the spring between traditional residents and newcomers, illustrating how cultural heritage is either preserved or forgotten amid the transformation of community identity. The work also highlights the urban development impact of Tsarav Aghbyur and the spread of its name as a carrier of territorial memory. The goal of the research is to examine and reveal the historical, cultural, and ritual significance of Tsarav Aghbyur among the population from the 19th century to the present day. To achieve this, a range of research methods were employed, including both qualitative and historical methodological approaches. A primary source of data is the fieldwork conducted by us in the Kanaker and Avan districts, aimed at studying local residents' memories, perceptions, and attitudes toward the spring.

Аннотация – Данное исследование направлено на выявление исторического, культурного и социально-экономического значения родника Царав ахбюр, расположенного на территории административного района Канакер-Зейтун города Еревана. Родник выделяется не только качеством воды, но и народными верованиями, сформировавшимися на протяжении веков, ритуальными практиками и важной ролью, которую он продолжает играть в коллективной памяти местного сообщества. На основе полевых исследований, архивных документов, исторических свидетельств и литературных произведений Хачатура Абовяна рассматривается вопрос о том, как изменилось восприятие родника за последние сто лет. Особое внимание уделяется различиям в восприятии источника между коренными жителями и новоприбывшими, что позволяет проследить, каким образом культурное наследие либо сохраняется, либо предается забвению в условиях трансформации общинной идентичности. Исследование также подчеркивает градостроительное значение Царав ахбюра и распространение его названия как носителя территориальной памяти. Целью исследования является изучение и раскрытие исторического, культурного и ритуального значения родника Царав ахбюр среди населения начиная с XIX века и до наших дней. С этой целью были применены различные исследовательские методы, включающие как качественные, так и историко-методологические подходы. Основным источником послужили полевые исследования, проведенные в административных районах Канакер и Аван, направленные на изучение воспоминаний, представлений и отношения местных жителей к роднику.

Հիմնաբառեր – Ծարավ աղբյուր, ծես, մեխ, ջրօգտագործում, քաղաքաշինություն:

Keywords – Tsarav Aghbyur, ritual, nail, water use, urban planning.

Ключевые слова – Царав ахбюр, ритуал, гвоздь, водопользование, градостроительство.

Ներածություն

Բնական աղբյուրները ոչ միայն կենսական անհրաժեշտություն են, այլև հոգևոր ու ծիսական արժեքներով հարուստ տարածքներ: Մեզանում ջուրն ընկալվել

է իբրև մաքրության խորհրդանիշ ու բուժման աղբյուր՝ դառնալով պաշտամունքի առարկա և համայնքային հիշողության անբաժան մաս: Այդ համատեքստում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող **Ծարավ աղբյուրը**, որը դարեր շարունակ եղել է ինչպես խմելու ջրի ապահովման կարևորագույն աղբյուր, այնպես էլ ուխտագնացությունների ու ժողովրդական ծեսերի իրականացման տարածք: Ծարավ աղբյուրն իր անվանումով, պատմությամբ ու կիրառության ձևերով միավորում է բնությունն ու հավատքը, տնտեսական գործառույթն ու համայնքային ինքնությունը:

Սույն աշխատանքը նպատակ ունի ներկայացնել Ծարավ աղբյուրի պատմական, մշակութային, ծիսական, սոցիալ-տնտեսական և քաղաքաշինական նշանակությունը՝ հիմնվելով արխիվային վավերագրերի, գրական աղբյուրների, բանավոր պատմությունների և դաշտային հետազոտական նյութի վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում աղբյուրի շուրջ ձևավորված հանրային պատկերացումների փոփոխությանը՝ հնաբնակ և նորաբնակ հանրության ընկալումների համեմատական վերլուծությամբ:

Հաշվի առնելով նաև ջրային ռեսուրսների ռազմավարական դերը ժամանակակից աշխարհում, հատկապես կլիմայական փոփոխությունների պայմաններում՝ Ծարավ աղբյուրի վերաիմաստավորումը պահանջում է նոր մոտեցում ինչպես մշակութաբանական, այնպես էլ հանրային քաղաքականության տեսանկյունից: Սույն ուսումնասիրությամբ փորձ է արվում վերարժևորել այդ տարածքի բազմաշերտությունն ու նշանակությունը՝ ընդգծելով դրա դերը ոչ միայն պատմական անցյալում, այլև արդի քաղաքային մշակույթի, սոցիալ-համայնքային հարաբերությունների և տարածքային ինքնության կերտման համատեքստում:

Աղբյուրի անվան ծագումը

Հայկական բնաշխարհին ու հավատալիքներին նվիրված ժողովրդական գրույցների շարքում մեծ տեղ են զբաղեցնում ջրի պաշտամունքին առնչվող ավանդությունները: Բանագետ Արամ Ղանալանյանը նշում է. «Այդ ավանդությունների մեջ ժողովուրդը տվել է դրանց անունների բացատրությունը, արել է ծագման պատմությունը, վեր է հանել այն ջանքերը, որ գործադրել է ինքը այդ ջրերը իր շահերին ծառայեցնելու համար» (Ղանալանյան 1969, ԽԸ): Ուշագրավ են աղբյուրների անվանումներն ու դրանց կազմության ձևերը, որոնք հաճախ համընկնում են աղբյուրի ֆիզիկական վիճակի ու գործառույթի հետ: Հայաստանի ազգագրական գրեթե բոլոր շրջաններում, հատկապես լեռնային գոտիներում, տարածված են բարդ բառերի համադրությամբ կազմված՝ Սառնաղբյուր (Շիրակ), Կաթնաղբյուր (Բյուրական), Լուսաղբյուր (Թալին), Օձաղբյուր (Սասուն) և նմանօրինակ անուններով աղբյուրները: Որոշ աղբյուրների անվանումներ կազմված են որոշյի կամ հատկացուցչի հարադրությամբ, օրինակ՝ Սև աղբյուր (Քեսաբ), Արջի աղբյուր (Դիզափայտ), Ականջացավի աղբյուր (Մոկս) և այլն: Սրանք բոլորն ունեն իրենց անունների ծագման մասին ավանդազրույցները (Ղանալանյան 1969, 95–111):



Նկ. 1, նկ. 2. Մխով աղբյուրը Արագածոտնի Իրինդ գյուղում
(լուսանկարները՝ Վահե Քոթանյանի)



Նկ. 3, նկ. 4. Մեխերով քարը Արագածոտնի Օհանավան գյուղի տարածքում
(լուսանկարները՝ Լևոն Մկրտչյանի)



Նկ. 5. Երվանդ Շահագիզը Ծարավ աղբյուրի մոտ (լուսանկարը՝ Երվանդ Շահագիզի «Աշտարակի պատմությունը» գրքից)



Նկ. 6. Երվանդ Քոչար, Ծարավ աղբյուրը Քանաքեռում, 1949 թ., կտավ, յուղաներկ, 66x49.5 սմ (պահվում է Երևանի Խ. Աբովյանի տուն-թանգարանում)

Հրազդան գետի կիրճը հայտնի է իր բնական աղբյուրների բազմազանությամբ, որոնք դարեր շարունակ ծառայել են ինչպես խմելու և ոռոգման, այնպես էլ ծիսական նպատակների համար: Պատմական Քանաքեռի տարածքում են գտնվում Ծարավ աղբյուրը, Դավալ աղբյուրը, Փիրուզան աղբյուրը, Շոռ աղբյուրը և մի քանի փոքր աղբյուրներ: Դրանցից առավել հայտնին Ծարավ աղբյուրն է՝ իր բարձրորակ ջրով և ժողովրդական հարուստ ավանդազրույցներով: Խաչատուր Աբովյանը, նկարագրելով այս աղբյուրը, գրում է. «Քանաքեռու տակիցը մեկ քսան ոտը Զանգվի դրաղիցը հեռու, աջու կողմիցը՝ մուրը շվաքի տակին, դուս ա գալիս էս անմահական աղբյուրն ու հանդարտ, մարմանդ գնում, Զանգին թափվում: Նհախ տեղը չեն անունը Ծարավ աղբյուր դրել, որ համ հոգով ա մարդիս ծարավը կոտրում, համ մարմնով» (Աբովյան 1947, 16): Խնդրո առարկա աղբյուրի անվան մեջ որոշչի դերով հանդես եկող «ծարավ» լրացումն ունի փոխաբերական իմաստ: Այն ենթադրում է ոչ թե ջրի բացակայություն, այլ ջրի այնպիսի հատկություն, որն ի վիճակի է հագեցնել մարդու ծարավն ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր իմաստով:

Հրազդան գետի ձախ ափին՝ Ժայռի տակից բխող Ծարավ աղբյուրի անվանումը կապված է «Ծովը (ջուրը) տանել՝ ծարավ հետ բերել» ժողովրդական առածի հետ: Պատմում են, որ «գյուղի երկու քեղխուղաներ (տանուտեր, գյուղում առաջավոր դիրք ունեցող, գյուղի իշխան, պարսկերեն *kedxudā* բառն է (Մալխասեանց 1944, 571) ինչ-որ հարցի շուրջ վիճելիս են լինում: Նրանցից մեկը, որն ավելի խորամանկ էր, մյուսին նսեմացնելու համար, ասում է. «Ես քեզ կտանեմ աղբյուրը, ծարավ հետ կբերեմ»: Իսկ մյուսը համառում է, և երկուսով իջնում են Հրազդանի կիրճի ամենավճիտ ու սառը ջուր ունեցող աղբյուրներից մեկի մոտ: Ընդդիմախոսը փորձում է ջուր խմել, մյուսն ասում է, թե այդպես չի լինի, մի վկա չկա, որ հաստատի ջուր խմելու փաստը: Դրա համար հարկավոր է գյուղ գնալ, մարդ բերել, որ ներկա լինի այդ արարողությանը: Համաձայնվում են, ձորից բարձրանում են (մոտավորապես հինգ կիլոմետր), մտնում գյուղ՝ վկա բերելու: Իսկ գյուղում համագյուղացիները սպասում էին նրանց վերադարձին: Աղբյուրից քեղխուղայի ծարավ հետ դառնալու մասին լուրն արագ տարածվում է Քանաքեռում: Այդ ժամանակվանից աղբյուրի անունը քանաքեռցիք դնում են Ծարավ աղբյուր» (Ասատրյան 1990, 9–10):

Աղբյուրի անվան ծագման վերաբերյալ շրջանառվում են նաև այլ տարբերակներ: Ըստ մեկի՝ աղբյուրը անվանվել է «Ծարավ» այն պատճառով, որ ջուրը խմելուց հետո ծարավը չի հագեցնում (Լալայան 1927, 223): Մեկ այլ տարբերակի համաձայն՝ ճանապարհորդները հենց այստեղ են հագեցնում իրենց ծարավը, ինչն էլ հիմք է դարձել «Ծարավ(ի) աղբյուր» անվան ձևավորման համար (Գալստյան 2024, 12–13):

Քանաքեռ–ազգագրագետ Հակոբ Չոլաքյանը մեզ ներկայացրեց աղբյուրի անվան ծագման բոլորովին այլ տարբերակ՝ հիմնված իր լսած բանավոր պատմության վրա. «Ես վարորդ է մը, Երեւանէն Ծարաւ աղբիւր գալու պահուն, լսեր եմ այլ աւանդազրոյց մը եւս. Քանաքեռի մէջ կը յայտնուին երկու կարսեցի քար-

տաշ եղբայրներ. անոնց կը վստահուի կառուցել աղբիւր մը, որուն ջուրը կը մտածուի յետագային հեռուէն բերել յատուկ ջրանցոյցով մը: Եղբայրները կը սկսին աշխատիլ: Տարեց կին մըն ամեն օր կուժ մը ջուր կը բերէ վարպետներուն: Երկար կը տեւէ: Կառոյցը իր աւարտին կը մօտենայ, իսկ կինը կը շարունակէ կուժով ջուր բերել քարտաշներուն:

– Ծարաւ աղբիւրին ջուր կը տանիմ, – կ'ըսէ եղեր կինը»:

Աղբյուրի անվան ծագման տարբերակները վկայում են համայնքի կյանքում աղբյուրի կարևորության մասին: Ծարավ աղբյուրը ոչ միայն խմելու ջրի աղբյուր է, այլև պատմություն և ավանդույթ փոխանցող մի տարածք, որտեղ բնական միջավայրն ու բանավոր մշակույթը միաձուլվում են՝ ձևավորելով տեղանվան յուրահատկությունն ու գործառնության շնանակությունը:

Ծարավ աղբյուրը՝ ծիսական տարածք

Ծարավ աղբյուրը ժողովրդի համար կարևոր ծիսական նշանակություն ունեցող վայրերից էր և հատկապես նշանավորվում էր **Համբարձման տոնին** նվիրված ծիսակատարություններով: «Այս տոնին մասնակցում էին ջահել աղջիկները, հարսները, տղաները: Քանաքեռի աղջիկներն իջնում էին Հրազդանի ձորը, այգիները, յոթ հանդերից ծաղիկներ քաղում, յոթ աղբյուրից ջուր առնում՝ «ջանգյուլումի» տոնն անցկացնելու համար» (Ասատրյան 1990, 94): Վարդավառը տոնելու համար քանաքեռցիները հիմնականում ուխտի էին գնում Ծաղկեվանք: Ովքեր չէին կարողանում գնալ Արայի լեռ՝ տոնն անց էին կացնում Ծարավ աղբյուրի մոտ (Ասատրյան 1990, 94):

Մինչև 1980-ականները Ծարավ աղբյուրը ուխտատեղի էր ոչ միայն հարակից բնակավայրերի, այլև Հայաստանի հեռավոր շրջանների բնակիչների համար: Աղբյուրի սրբության մասին վկայություններ կան դեռևս XIX դարից: Խաչատուր Աբովյանը գրում է. «Ով Ծարավ աղբի գլխին մեկ անգամ նստել ա, կուզի, որ սաղ տարին էն տեղ իր օրն անցկացնի: Մեկ խաչի, սրբի զորություն էլ սա ունի: Սրանից էլ թուրք ու հայ, ով հավատով մոտենա, իր մուրազն ստանում ա: Ջրին մտիկ անելիս հազար բան ա ընկնում աչքովդ՝ փող, երկաթի կտոր, մեխ, ուլունք, ինչ ասես, որ նրա միջումը չկա: Որ բարեպաշտ ուխտավորը էկել՝ մեջն ա գցել, ուխտը կատարել, գնացել» (Աբովյան 1947, 15):

Աղբյուրի ավազանը ծիսական մի շարք գործողությունների համար ծառայող տարածք էր: Ըստ ազգագրական վկայությունների՝ կանայք ավազանի մեջ տարբեր իրեր էին գցում՝ գուշակության նպատակով: Հղի կանայք ջրից դուրս բերված առարկաների միջոցով փորձում էին որոշել ապագա երեխայի սեռը (Նազարեանց 1878, 20–21):

Քանաքեռցի կանայք ծննդաբերության և մանկատառության ծեսերի շրջանակում ևս դիմում էին Ծարավ աղբյուրի կամ Քանաքեռից 15 կմ հեռավորության վրա գտնվող Կաթնաղբյուրի զորությանը: Կրծքի կաթը ավելացնելու նպատակով նոր ծննդաբերած կանանց ուխտի էին տանում այնտեղ: «Նախօրոք եփում էին հատիկ՝ ցորենից կամ ձավարից, կանեփից և, ըստ ցանկության, նաև

սիսեռից ու այլ ընդդեմներից: Սակավակաթ կնոջը նստեցնում էին դեմքով դեպի աղբյուրի հակառակ կողմը, կուրծքը դնում էին երեխայի բերանը և մեջքի կողմից կնոջ գլխի վրայով հատիկը բուռ-բուռ նետում աղբյուրի մեջ, հետո էլ աղոթք կամ աղերս շնչում, խնդրում Աստծո օգնությունը» (Ասատրյան 1990, 96–97):

Աղբյուրի մոտ գտնվող քարը ևս ուներ հստակ ծիսական նշանակություն: Այն ուխտի վայր էր հիմնականում անպտուղ կանանց համար, որոնք իրենց հետ բերում էին եզը պայտելու գամեր: Գամերը մեխելով քարի մեջ՝ նրանք հավատում էին, թե իրենց հիվանդությունն ու անհնար բեղմնավորությունն այդ կերպ թողնում են այնտեղ՝ «կապում են քարին»: Այս ծիսակարգի մասին հիշատակում է նաև Խաչատուր Աբովյանը՝ վկայելով ժողովրդական հավատալիքների և ավանդույթների առկայությունը XIX դարում. «Աղբրի գլխի քարը հո սաղ տեղ չունի, էնքան մեխ ա մեջը ցցած: Ով սրանց ձեռ տա, միջիցը հանի, ձեռը կչորանա, էնքան ա սրբի հրաշքը» (Աբովյան 1947, 15):

Հիվանդությունը քարին մեխելու այս հավատալիքը հեթանոսական ժամանակաշրջանի մնացորդ է, որը լայն տարածում է ունեցել նաև հարևան ժողովուրդների մեջ: «Մոզական» մեխերը հռոմեացիների կենցաղի կարևոր մաս էին կազմում և մեծ տարածում ունեին (How 2019, 213–227): Ըստ Երվանդ Լալայանի՝ դեռևս Ք.ա. IV դարում Հռոմում գոյություն է ունեցել սովորույթ, որի համաձայն՝ համաճարակի (օրինակ՝ ժանտախտի) ժամանակ ժողովուրդը հանրային թափոր էր կազմակերպում և մեխ էր գամում՝ համաճարակը «գամելու» և տարածումը կանխելու նպատակով: Այս սովորույթը հետագայում վերածվել է օրենքի՝ ամրագրվելով Յուլիտերի տաճարում: Ամեն տարի սեպտեմբերի 13-ին այդ արարողությունը կատարվում էր հյուպատոսի, իսկ ավելի ուշ՝ դիկտատորի կողմից՝ որպես ավելի բարձր իշխանություն (Լալայան 1927, 223; Livius 1905, 7.3): Չի՞ կարելի արդյոք այս հնագույն հավատալիքի վերափոխված ձևը տեսնել այսօր որոշ ուխտատեղիներում, երբ մարդիկ բուժման նպատակով սրբացված ծառերին լաթեր են կապում՝ հավատալով դրանց բուժիչ ուժին:

Հմայական գործողություններում մեխով գամում էին ոչ միայն հիվանդությունները, այլև չարն ընդհանրապես (Իսրայելյան 2018, 239): Այդ մոզական հնարքով՝ մեխը գետնի մեջ, դռան շեմքին կամ պատին մեխելով՝ կանխում էին չարքերի մուտքը, սպանում էին հիվանդության պատճառ դարձած կամ կանանց ու երեխաներին սպառնացող չար ուժերին (Թադևոսյան 2007, 152):

Չնայած այս հավատալիքներին՝ Ծարավ աղբյուրի սրբացված քարը ժամանակի ընթացքում անհետացել է: Վերջին հավաստի հիշատակությունը քարի մասին մեզ հասել է Երվանդ Լալայանի գրառումներից, որտեղ նշվում է. «Ծարավ աղբյուրի վրա մեծ քար կա, որի վրա հիսունվեց մեխ է գամված» (Լալայան 1927, 223):

Նմանատիպ քարերի կարելի է հանդիպել նաև Հայաստանի այլ բնակավայրերում: Հատկանշական օրինակներ են Իրինդի Մխով աղբյուրը (նկ. 1, 2), Օհանավանի ձորում գտնվող Մեխերով քարը (նկ. 3, 4), Սիսիանի Պորտաքարը (Լիսիցյան 1969, 285) և այլն: Այս քարերը հիմնականում կապված են բուժման

առասպելույթի հետ՝ ուղղված լինելով հատկապես կանանց վերարտադրողական խնդիրներին:

Երվանդ Շահազիզի «Աշտարակի պատմությունը» գրքում զետեղված է Ծարավ աղբյուրի լուսանկարը, որտեղ հեղինակը նստած է մանր խաչերով պատված քարի մոտ (նկ. 5): Նույն խաչազարդ քարը պատկերված է նաև Երվանդ Քոչարի «Ծարավ աղբյուրը Քանաքեռում» կտավում՝ նկարված 1949 թ. (նկ. 6): Այս վկայություններում յուրովի արտացոլված է ջրի ու քարի պաշտամունքների միջև գոյություն ունեցող ներքին աղերսը, որոնց «համագործակցությունը» բուժում է մարդկանց:

Ծարավ աղբյուրը, իբրև ժողովրդական հավատալիքների և ծեսերի իրականացման տարածք, հայ հոգևոր մշակույթի կարևոր բաղկացուցիչ է, որի շուրջ ձևավորված են եղել ինչպես անհատական ուխտի, այնպես էլ համայնքային ծիսակարգերի ավանդույթներ: Ծարավ աղբյուրի օրինակով կարելի է ցույց տալ, թե ինչպես են բնական երևույթները ներդաշնակորեն միաձուլվել հայկական ժողովրդական հոգևոր մշակույթի հետ՝ դառնալով ժողովրդական հավատքի և համայնքային համախմբման կենտրոն: Տասնամյակներ շարունակ այն ծառայել է ոչ միայն որպես ուխտագնացության վայր, այլև՝ հոգևոր խորհուրդներով հագեցած սրբավայր, որին մարդիկ դիմել են բուժում և հաջողություն ստանալու ակնկալիքով: Հատուկ նշանակություն է ունեցել նաև Համբարձման տոնի ծիսակատարությունների անցկացումը՝ խորացնելով աղբյուրի կապը բնության հետ:

Աղբյուրի տնտեսական նշանակությունը

Ծարավ աղբյուրը երկար ժամանակ եղել է Երևանի և հարակից բնակավայրերի ջրամատակարարման կարևորագույն աղբյուրներից: Դեռևս XIX դարի երկրորդ կեսից, հատկապես 1870-ականներից սկսած, Երևանի խմելու ջրի ապահովման հարցը դառնում է քաղաքաշինական առաջնահերթություններից մեկը: Վերոնշյալ շրջանում ներկայացված մի շարք նախագծեր նպատակ ունեին ընդլայնել քաղաքի ջրամատակարարման ցանցը՝ հիմնվելով բնական աղբյուրների վրա: 1891 թ. լեռնային ինժեներ Աղաբաբյանի նախաձեռնությամբ առաջին անգամ փորձ է արվում Ծարավ աղբյուրի ջուրը տանել Քանաքեռ՝ դրա միջոցով լուծելով բնակչության խմելու ջրի խնդիրը: Շինարարական աշխատանքներն ակտիվորեն ընթանում են 1909 թվականից, և արդեն 1911 թվականին Ծարավ աղբյուրի ջուրը հասնում է Երևան, իսկ մեկ տարի անց՝ Քանաքեռ, ինչը մեծապես նպաստում է քաղաքում բնակչության կյանքի որակի բարելավմանը և տնտեսության զարգացմանը (Ասատրյան 1990, 8):

Խորհրդային շրջանում, մասնավորապես 1950–1960-ականներին, Երևանի տարածքային ընդլայնման, արդյունաբերության զարգացման և բնակչության թվաքանակի կտրուկ աճի հետևանքով զգալիորեն մեծանում է ջրային ռեսուրսների սպառումը: Խնդիրը լուծելու համար կառուցվում են ջրմուղային նոր համակարգեր, այդ թվում՝ Շողոռոհի և Ծարավ աղբյուրի ջրագծերը (Հակոբյան 1977,

43), որոնց շնորհիվ ավելանում է ջրամատակարարման ծավալը, և նվազում՝ քաղաքային ջրաբաշխման համակարգի գերբեռնվածությունը:

Ծարավ աղբյուրը ներկայումս ևս Երևանի ջրամատակարարման համակարգում կարևորագույն ջրաղբյուր է: 2025 թվականի հուլիսի 2-ի մեր հարցման ժամանակ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության համաձայն, Ծարավ աղբյուրը դիտարկվում է որպես խմելու ջրի ապահովման կայուն աղբյուր՝ ունենալով առանցքային դեր մայրաքաղաքի բնակչությանը որակյալ և շարունակական ջրամատակարարում ապահովելու գործում (Գրություն N 23891, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ տնօրինություն):

Ջրի առկայությունը և մատչելիությունը քաղաքային տարածքներում տնտեսության զարգացման հիմնասյուներից են: Բնական աղբյուրների օգտագործումը տնտեսական տեսանկյունից առավել արդյունավետ է, քանի որ նվազեցնում է ջրի մշակման և մաքրման ծախսերը: Ջրային տնտեսության համատեքստում Ծարավ աղբյուրը դիտարկվում է որպես բնական կապիտալի մաս: Հաշվի առնելով կլիմայական փոփոխությունները, հողերի ոռոգման և բնակչության թվի շարունակական աճը՝ այսպիսի ռեսուրսների պահպանությունը և խելամիտ կառավարումը դառնում են առավել քան հրատապ: Ծարավ աղբյուրը ոչ միայն պատմականորեն կարևոր ռեսուրս է Երևանի ջրամատակարարման համակարգում, այլև շարունակում է ունենալ ռազմավարական նշանակություն՝ նպաստելով մայրաքաղաքի տնտեսական կայունությանն ու սոցիալ-հիգիենիկ կենսապայմաններին:

Ծարավ աղբյուրը՝ քաղաքային թաղամաս

2025 թ. փետրվարի 26-ին Երևանի քաղաքապետարան մեր ներկայացրած դիմումի պատասխանով հաստատվել է, որ 1991 թ. օգոստոսի 21-ի Երևանի Ժողովրդական պատգամավորների քաղաքային խորհրդի թիվ 15/62 որոշմամբ, Քանաքեռի-Զեյթուն համայնքի Իլիչի փողոցը վերանվանվել է Ծարավ աղբյուրի անունով՝ ի պատիվ տվյալ վայրում գտնվող խմելու ջրի գլխավոր աղբյուրի (Գրություն N 21/25342–25, Երևանի քաղաքապետարանի կազմակերպական վարչություն): Ազգագրագետ Սուրեն Հոբոսյանի հաղորդմամբ՝ Իլիչի փողոցը Ծարավ աղբյուր վերանվանելու առաջարկի հեղինակը ազգագրագետ Զավեն Խառատյանն էր: Այսօր Ծարավ աղբյուր փողոցը ձգվում է մոտ 2.65 կմ երկարությամբ՝ անցնելով Ավան համայնքից դեպի Քանաքեռ-Զեյթունի վարչական տարածք: Այն երկու համայնքները կապող կարևոր ճանապարհ է: Քաղաքաշինական վերջին գործընթացների շնորհիվ Ծարավ Աղբյուրի՝ Ավանի հատվածում ձևավորվել է համանուն նորակառույց թաղամաս: Թաղամասի ակտիվ կառուցապատումը սկսվել է 2014 թվականից, երբ տարածքում ձեռնարկվեցին բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքներ՝ հիմնվելով առկա ենթակառուցվածքների վրա:

Մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ էական տարբերություն կա թաղամասի բնակիչների ընկալումների մեջ: Նորաբնակների շրջա-

նում «Ծարավ աղբյուր» անվանումը, որպես կանոն, ընկալվում է որպես զուտ **փողոց կամ հասցե**, և այն չի զուգորդվում որևէ պատմական կամ մշակութային ժառանգության հետ: Այլ կերպ ասած՝ նրանք չունեն համարժեք մշակութային հիշողություն այդ անվան վերաբերյալ, չեն կրում պատմության շաղկապը և չեն ընկալում այն որպես ժառանգություն:

Ի հակադրություն այս փաստի՝ նշենք, որ փողոցի Քանաքեռի հատվածի բնակիչները, հատկապես միջին և ավագ տարիքային խմբերի ներկայացուցիչները, գիտեն և կարևորում են Ծարավ աղբյուրի պատմությունը, որը կապված է տեղանքի ավանդույթների, համայնքային հիշողության և ինքնության հետ: Այդ բնակչությունը փողոցն ընկալում է ոչ միայն որպես ֆիզիկական տարածք, այլ նաև որպես պատմական ժառանգության կրող, որն արտացոլում է տարածքի տեղական ինքնությունը:

Այսպիսով, Ծարավ աղբյուրի պարագայում քաղաքային միևնույն փողոցը և թաղամասը հանդես են գալիս որպես բազմաշերտ տարածք, որը ներառում է ինչպես քաղաքաշինական զարգացման, այնպես էլ մշակութային հիշողության շերտեր, որոնց ընկալումը տարբեր է՝ կախված բնակչության սերնդային և տեղաբնիկ-նորաբնակ պատկանելությունից:

Եզրակացություններ

Ելնելով վերոնշյալից կարելի է արձանագրել, որ՝

1. Ծարավ աղբյուրը ձևավորվել է որպես բազմաշերտ մշակութային տարածք, որն իր մեջ միավորում է բնական, ծիսական, տնտեսական և սոցիալ-քաղաքաշինական գործառույթներ:

2. Աղբյուրի անվան ծագման վերաբերյալ շրջանառվող զրույցները և գրական վկայությունները հաստատում են տեղանվան մեջ ներգրավված հավաքական հիշողության և համայնքային ինքնության փոխանցման կարևորությունը:

3. Ծարավ աղբյուրը պատմականորեն գործել է որպես սրբավայր, որտեղ իրականացվել են առողջության, պտղաբերության և գուշակության հետ կապված ծեսեր, ինչը վկայում է աղբյուրի ծիսականության մասին:

4. Երևանի ջրամատակարարման համատեքստում Ծարավ աղբյուրը մշտապես եղել է ռազմավարական նշանակության ջրաղբյուր, որը հատկապես XX դարից ի վեր ապահովել է մայրաքաղաքի բնակչության կենսական պահանջները:

5. Թաղամասային ինքնության ուսումնասիրությունը բացահայտում է մշակութային հիշողության ընկալման սերնդային և սոցիալ-տարածքային տարբերությունները, որոնք պայմանավորված են հնաբնակների և նորաբնակների պատմամշակութային կապերի տարբեր մակարդակներով:

Շնորհակալական

Հետազոտությունը կատարվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող՝ «Ջրագտագործման մշակույթը հայկական

լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (21AG-6A080 ծածկագրով) ծրագրի շրջանակում:

Հոդվածը գրելու ընթացքում մեզ տված օգտակար խորհուրդների և տրամադրած աղբյուրների համար շնորհակալություն ենք հայտնում բանագետ-ազգագրագետ Հակոբ Զոլաքյանին, ազգագրագետ Սուրեն Հոբոսյանին, Ռոման Հովսեփյանին և Անի Սարատիկյանին: Լուսանկարների համար շնորհակալություն ենք հայտնում հնագետ Լևոն Մկրտչյանին և ազգագրագետ Վահե Քոթանյանին: Շնորհակալ ենք նաև Երևանի քաղաքապետարանին և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին՝ իրենց հասցեագրված նամակներին արագ արձագանքելու և հետազոտության համար տված արժեքավոր տեղեկությունների համար:

Գրականություն/References/Литература

1. Աբովյան Խ. 1947, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 4, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Abovyan Kh. 1947, Complete Works in Eight Volumes, vol. 4, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
2. Ասատրյան Գ. 1990, Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները, Երևան, «Հայաստան»:
Asatryan G. 1990, Historical Kanaker and the People of Kanaker, Yerevan, Hayastan (in Armenian).
3. Գալստյան Հ. 2024, Դաշտային բանահյուսական և ազգագրական նյութերի գրառումներ, Երևան, տետր 1, 12–13:
Galstyan H. 2024, Field Recordings of Folklore and Ethnographic Materials, Yerevan, Notebook 1, 12–13 (in Armenian).
4. Թադևոսյան Ա. 2007, Դարբինը հայոց ծիսակարգում (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 23, Երևան, «Գիտություն»:
Tadevosyan A. 2007, Blacksmith in the Armenian Ritual System (A Historical–Ethnographic Study), Armenian Ethnography and Folklore, vol. 23, Yerevan, Gitutyun (in Armenian).
5. Իսրայելյան Ա. 2018, Մետաղե զենքերը, գործիքներն ու սարքերը հմայությունում, Պատմաբանասիրական հանդես, N 2, 234–253:
Israelyan A. 2018, Metal Weapons, Tools, and Devices in Enchantment, Historical-Philological Journal, N 2, 234–253 (in Armenian).
6. Լալայան Ե. 1927, Կոտայքի հաշվետվություն, Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի, N 2, 220–225:
Lalayan Y. 1927, Kotayk Report, The Bulletin of the Institute of Science and Art, N 2, 220–225 (in Armenian).
7. Լիսիցյան Ս. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Lisitsyan S. 1969, The Armenians of Zangezur, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).

8. Հակոբյան Թ. 1977, Սովետական Հայաստանի քաղաքները (ակնարկներ), Երևան, «Հայաստան»:
Hakobyan T. 1977, Cities of Soviet Armenia (Essays), Yerevan, Hayastan (in Armenian).
9. Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Ghanalanyan A. 1969, Legendary Tales, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
10. Մալխասեանց Ս. 1944, Հայերէն Բացատրական բառարան, հ. 4, Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատ.:
Malkhaseants S. 1944, Explanatory Dictionary of Armenian, vol. 4, Yerevan, State Publishing House of the Armenian SSR (in Armenian).
11. Նազարեանց Յ. 1878, Նախապաշարմունք, հ. 1, Տփլիս, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան:
Nazareants H. 1878, Superstition, vol. 1, Tiflis, Printing House of Hovhannes Martirosyants (in Armenian).
12. Շահազիզ Ե. 1987, Աշտարակի պատմությունը, Երևան, «Հայաստան»:
Shahaziz Y. 1987, The History of Ashtarak, Yerevan, Hayastan (in Armenian).
13. Livius T. 1905, The History of Rome, Book 7: Frontier Wars – (366–341 B.C.), 7.3, Ernest Rhys Publisher: J.M. Dent & Sons, Ltd., London.
14. How Ch. 2019, Historic ‘Magic’ Nails: Their Typologies and their Ritual Uses; Water, Doors and Buildings: Studies in the History of Construction, The Proceedings of the Sixth Conference of the Construction History Society, Queens’ College, Cambridge, 5–7 April, 213–227.